բերութիւնը։ Եւ իւր բոլոր ունեցածն առաջարկելով հայրենեաց սեղանի վրայ, այդ (էկզալտիրովանի) յափշտակուած հայրենասէրը չի մտածում իւր մերձաւորների անձնաւորութեանց և իւր ընտանիքի առաջարկած զոհաբերութեան անգործադրելիութեան մասին։

Նա մանրամասն տեղեկագրում է իւր մասին, որ գիտէ հինգ լեզու (ռուսերէն, ասորերէն, հայերէն, թուրքերէն և վրացերէն)։ գրում է, որ ինքն ու իւր ընտանիքը «ֆիզիքական ոչ մի արատ չունին», որ նա իւր կրթութիւնը ստացել է հոգևոր սեմինարիայում և միսիոներական դասընթացներում, ունի կամելաւորում։ յիշում է, որ լաւագոյն վկայութիւններ ունի Վրաստանի էկզարխ Ալէքսէյից և այլն։

Վաճառուելու առաջարկութիւնը մեր խմբագրութեան մէջ ստացուած է բլանկի վրայ, պաշտօնական № 93 գրութեամբ ապրիլի 21-ից և վերջում կնքուած է եկեղեցական կնքով։

Վաճառուելու պատճառը պաշտելի հայրենիքի պաշտպանութիւնն է խորամանկ Եապոնիայից։

Իւր և իւր ընտանիքի վաճառման վճիռը նա յայտնում է ըստ իւր վկայութեան՝ մտաւոր առողջութեան և իւր բարոյական պարտականութեան խոր գիտակցութեամբ»։ ։ ։

Բայց նա արդեօք իրօք հոգեպէս առողջ է։ Եթէ նա մենակ է, ապա արդեօք ներկայումս, երբ Կովկասում տիրում է մտքերի յուզումն ու խռովութիւն, կարելի է նրան թողնել քարոզչական գործունէութեան և ծուխը հովուելու համար։ Անկարելի է երևակայել, որ ռուս քահանան չը գիտենայ, թէ մեղանում պետական օրինաց համաձայն չի կարելի ոչ ծախել և ոչ էլ գրաւ դնել մարդկանց։

Բայց այն դէպքում, եթէ նա առողջ է, նրա գրութիւնը՝ արտատպելու խնդրանքը՝ հանդիսանում է մի միայն ըեկլամ նրա հայրենասիրութեան։

Արդեօք վայել են այդպիսի միջոցները մի քահանայի համար»։

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ ՎՐԱՑ

Մայիսի 27-ից Թիֆլիզ հաւաքուեցին Վրաստանի և Կախէթիայի վրացի քահանաներն իրենց եկեղեցու անյետաձգելի կարիքների մասին խորհրդակցելու։ Վրաստանի սրբ. էկզարխը սկզբում թէև յայտարարեց, որ ոչ մի ժողով թոյլ չի տրուել՝

սակայն տեսնելով, որ քահանայքն ու երենց դպիրները՝ մօտ 700 հոգի՝ կարծելով, որ ժողովի հրաւէրը հոգևոր բարձր իշխանութեան կողմից է եղած, արդէն հաւաքուել են Թիֆլիզ՝ ըստ «Кавказъ» թերթի հաղորդագրութեան՝ չուզենալով, որ հոգևորականները զուր ժամանակ կորցնեն, թոյլատրեց ժողովները, նշանակեց երեն կողմից ներկայացուցիչ Թիֆլիզի ռուսաց Սեմինարիայի տեսուչ Նիկանդր վարդապետին և գծեց ժողովի պարապմունքների շրջանակը, պահանջելով, որ ժողովի հրաւէրուին նաև Կարսի և Բաքուի նահանգների քահանաների ներկայացուցիչները։ Փոխանակ բոլոր քահանաների, ժողովին մասնակցելու համար պէտք է ընտրուէին դորձակալական պատգամաւորները և պարապմունքներ պէտք է վերջանային յունիսի երեքին։ Սակայն մասամբ թիւրիմացութեան և մասամբ էլ ոստիկանական հոգեբանութեան շնորհիւ մայիսի 31-ին դպրանոց հրաւիրուեցին զաղախ ռուսներ և ոստիկաններ՝ հանդիսական աշխարհականներին ցրուելու, որոնք երբև թէ եկել էին ռումբով քանդելու սեմինարիայի շէնքը։ Տեղի ունեցաւ սովորական ընդհարումն, որի ժամանակ ծեծուեցին և վիրաւորուեցին մի քանի հոգի նոյնիսկ քահանաներից։ Ի հարկէ նիստերն այլ ևս չը շարունակուեցին և վրդովուած ժողովականները մի միայն հաւաքուեցին հետևեալ օրը բողոքելու այդ բաշիբուզուկութեան հեղինակների դէմ։ Այդ առթիւ լրագիրներում կարդում ենք հետևեալը։—

—Վրաստանի և Կախէթի քահանաների պատգամաւորութիւնը ծեծուած քահանաների և դպիրների հետ երեկ յունիսի 2-ին ներկայացաւ Փոխարքային, յայտնեց մայիսի 31-ին և յունիսի 1-ի գիշերը պատահածների մասին և խնդրեց, որ հոգևորականութեան որոշումներն իրագործուին։ Նոյն օրը Թիֆլիզի նահանգի ազնուականութեան պատգամաւորները՝ իշխան Ալ. Զամբակուրեան Օրբէլեանու առաջնորդութեամբ (ազն. պարագլխի պաշտօնակատար) ներկայացան Կովկասի Փոխարքային և յայտնեցին ոստիկանութեան և զաղախների արարքները վրաց հոգևորականութեան նիստին մայիսի 31-ի գիշերը։ Պատգամաւորութիւնը խնդրեց քննել տեղի ունեցածները և պատժել այն անձանց, որոնց նախաձեռնութեամբ և եռանդով տեղի ունեցաւ յիշեալ տխուր դէպքը։ Փոխարքան խոստացաւ խիստ քննութիւն կատարել հոգևորականութեան, ազնուականութեան և այլոց ներկայութեամբ։

Յունիսի 2-ին քաղաքագլխի պաշտօնակատար Զերբէզովի մօտն էր Վրաստանի և Կախէթիայի քահանաների պատգամաւորութիւնը, որը յայտնեց մայիսի 31-ին հոգևորականութեան

հետ պատահած դէպքերի մասին։ Քաղաքագլխի պաշտօնակատարը ցաւակցութիւն յայտնեց վրաց հոգևորականութեան քաղաքային ինքնավարութեան կողմից։

—Երեկ յունիսի 2-ին Թիֆլիզի դուման (խորհուրդը) լսեց սեմինարիայում և նրա շէնքի առաջ վրաց հոգևորականութեան հետ պատահածների մասին և ի նշան ցաւակցութեան ընդհատեց և փակեց նիստը։

—Յունիսի 1-ին Թիֆլիզում տեղի ունեցաւ Քարթալինիայի և Կախէթի գործակալների ժողովը, որը վճռեց դադարել գործակալական պաշտօն կատարելուց մինչև որ չը պարզեն և արժանաւոր կերպով չը պատժեն նրանց, որոնք առաջ բերին մայիսի 31-ի դէպքը։ Այս վճռի մասին յայտնեցին նաև ս. Էկզարքոսին։ Քարթալինիայի և Կախէթի հոգևորականութեան հետ միացան նաև Բաքուի և Գանձակի նահանգի գործակալները։

Փոխարքայի կողմից մայիսի 31-ի դէպքի քննիչ նշանակուած է գեներալ Ստախովիչ՝ ազնուականութեան կողմից ներկայացուցիչ՝—Ա. Ի. Զամբակուրեան Օրբելեանի, հոգևորականութեան կողմից քահանայից ժողովի նախագահ Քրիստափոր քահանայ Ցիցքիշվիլի և քարտուղար՝ Ալ. Կանչելի։

Թիֆլիզի հայ հոգևորականութիւնը լսելով մայիսի 31-ին վրաց հոգևորականութեան հետ պատահածների մասին, որոշեց ցաւակցութիւն յայտնել առանձին պատգամաւորութեան միջոցաւ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ամերիկայի միլիոնատէր Ռաքֆէլլերը 200,000 ռուբլի նուիրեց բարեգործական նպատակով։ Բողոքական քարոզիչներից շատերը յանձնաժողով կազմեցին, որպէս զի կարողանային հանրային կարծիք պատրաստել, որ այսուհետև անմաքուր աղբիւրներից բխած դրամը հոգևոր գէպքերի համար նուէր չընդունուի։ Այդ քարոզիչներն ասում են, որ «Ստանդարտ Քարիւղի ընկերութեան» հետևած ուղղութիւնը այդպիսի պայքարի պէտք ունի։ «Քրիստոսի Եկեղեցին փորձութեան մէջ է, ինչպէս և այն բոլոր առևտրական մեծ հարստահարիչները, որոնք Եկեղեցու պաշտպանութեան են ապաւինում»։ Պարզ է, որ քարոզիչների յանձնաժողովը դժուար գործ է սկսել։ Պ. Ռաքֆէլլերը համարեա՝ ամենայն օր առատ դումարներէ նուիրում կրօնական և կրթական նպատակաւ և շատ քչերն են առարկութիւն